ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

(Ա. Շահազիզեանին քննադատելու առիթով)

Պր. Սմբատ Շահազիզեանի բանաստեղծութեան մասին պ. Մաղաքեանի «Մուրճ»-ում տպած քննադատական յօդուածի առիթով, որը վերջանում է միայն ներկայ համարում, մամուլի մէջ չտպեցին կարծիք յայտնելու. Դժար թւաց մի ամիս էլ սպասել մի դատ պաշտպանելու համար, որը, մի ամբողջ քառորդ դար ամենայն սառնասրտութեամբ մոռացութեան էր տրուած. Մեզանում գրականութիւնը ապրում է առանց քննադատութեան. Այն դերը, որ կատարում է կրիտիկան գրականութեան զարգացման համար, այդ կրիտիկան դեռ նոր նոր փորձերով սկսում է միայն ստեղծել. Շնորհիւ կրիտիկայի բացակայութեան, գրականութիւնը մնում է չը գնահատուած իւր ոչ լաւ և ոչ վատ կողմերից. Նոյն այդ կրիտիկայի բացակայութեանն ենք պարտական, որ այսօրւայ օրս մի որ և իցէ քառորդ դար առաջ եղածը մեզ թւում է արդէն մեծ հնութիւն, որի հետ իբր թէ ժամանակաց գրականութիւնը ոչինչ կապ չունի, ոչ լեզւի, ոչ բովանդակութեան, ոչ մտքերի, ոչ ոգու ու տենդենցիաների կողմից. Այսպէս է պատահել որ մեր նոր գրականութեան ամենաքնքուշ գործերից մէկը՝ «Լեւոնի վիշտը» Սմբատ Շահազիզի, ամենաքնքուշը թէ լեզւի, թէ գաղափարների և թէ ձգտումների կողմից՝ մնացել է բոլորովին չգնահատուած մեր կրիտիկայի կողմից և նոր սերնդի համար նա կարծես թէ գոյութիւն չունէր. Պր. Մաղաքեանը իւր յօդուածով ընդհատեց այդ ընդհանուր լռութիւնը՞, և ցոյց տուեց, որ այն, ինչ այդքան անծանօթութեամբ լռութեան էր տուել, տեղ է բռնում մեր թէ գրականութեան և թէ առհասարակ մտաւոր ու քաղաքակրթական զարգացման նորագոյն պատմութեան մէջ, և որ այդ տեղը նա բռնում է ոչ իւր բացասական, այլ դրական կողմերով. Այս է ընդհանուր տպաւորութիւնը, որ ստացւում է պ. Մաղաքեանի ընդարձակ յօդուածից. Նորա այդ ընդհանուր մտքին համակարծիք լինելով, մենք ուրախութեամբ տպեցինք պ. Մաղաքեանի յօդուածը «Մուրճ-ում», առանց որ մենք մեզ կապած համարէինք յօդուածի մէջ արտայայտուած ամեն մի տողի, ամեն մի հայեացքի հետ և ոչ էլ պ. Շահազիզեանի գրական գործունէութեան, նորա բանաստեղծական քանքարի և նորա պոէմի ու այլ երգերի գեղարուեստական և այլ արժա-

նաւորութիւնների մասին «Մուրճ»-ը, իբրև օրգան, իւր վերջին խօսքը ապաւպատած համարի պ. Մաղաթեանի լսուածով։ Ինդհակառակը, մենք դեռ բաց ենք համարում այդ խնդիրներից մի քանիսը և ցանկալի ենք համարում որ կատարեն ուսումնասիրութիւններ, որոնք ցոյց կը տան պ. Շահազիզի գրուածների լեզուի կորովը և բանաստեղծական ուժը, որոնք ըստ մեզ քաւականաչափ գնահատութիւն չեն գտած պ Մաղաթեանի լսուածում։

Մենք սակայն չնորհաւորում ենք պ. Մաղաթեանին որ նա նոցանից էլ, որոնք փորձում են գրական քննադատութիւն բոլորովին անկախ որև է անմիջական մանաւանդ թէ անձնական նպատակից։

Մեզ թւում է թէ պ. Մաղաթեանը իւր այդ առաջին փորձը արել է իրան համակրելի մի բանաստեղծի վերաբերմամբ, և լաւագոյնս ի նկատի ունենալով պ. Շահազիզի բարձր նշանակութիւնը, որ ընդհանուր լուութեան մէջ մոռացութեան էր տրուած, բայց որը նա ուզեցել է հրապարակ հանել։ Նորա այդ ցանկութիւնը համակրութիւն և խրախուս է գտել մեր կողմից. և, իրօք, մեր առաջադրած նպատակի մի մասին՝ մեր ժամանակակիցների համար վերակենդանացնել իւր հասարակական ձգտումներով համակրելի մի բանաստեղծութիւն, նպատակի այդ մասին մի չափով մենք հասած ենք համարում։ Թողնենք թէ պ. Մաղաթեանի լսուածի այն երեսները («Մուրճ» 1891 թ. № 12, երես 1562 և այլն), որ քննադատութեան է առնում պ. Տ. Յովհաննիսեանը, (տես «Մշակ» 1892 թ. №№ 12, 13) ինչ ազատութիւն կարող են թողնել շատերի վերայ։ Բայց մենք, որ շատ մեծ հիմք ունենք չը կասկածելու պ. Մաղաթեանի դիտաւորութիւնը, նորա վերաբերմունքը դէպի Նազարեանցի, «Հիւսիսափայլ»-ի առհասարակ, Նալբանդեանի, Շահազիզեանի ուղղութիւնը (տես «Մուրճ» 1891 թ. № 3, 6, 7—8), մենք նաև բոլորովին այլ մտքով ենք ըմբռնում պ. Մաղաթեանի այս խօսքերը, թէ «Անկեղծութիւնը պահանջում է խոստովանել, որ Լևոնը հէնց այդ տեսակ ֆրազեօրի ազատութիւն է անում»։ Լևոնը, պ. Մաղաթեանի ասածով, մեր հայրենիքի մէջ պաշտող ու գործող մարդ է և ոչ թէ մի խմբագիր, բանաստեղծ։ Եւ նա գտնում է որ Լևոնը, որ իւր հայրենիքի գիւղերն է պաշտում, ինչպէս է գործում կամ խօսում, որ ժողովրդի աչքում նա ֆրազեօրի ազատութիւն է անում։ Իսկ պ. Յովհաննիսեանը դրանից եզրակացնում է թէ իբր պ. Մաղաթեանի աչքում Նազարեան, Նալբանդեան, Շահազիզեան ֆրազեօրներ են։ Զօռով դուրս բերած եզրակացութիւն չէ այդ արդեօք? Այո, մեզ թւում է թէ այդ եզրակացութիւնը զօռով է դուրս բերուած։

Գր. Մաղաթեանը պակասութիւն է գտնում Լևոնի մէջ որ նա իւր հայրենիքում շրջելով չփութն չի ունենում իւր ժամանակաւոր գործողների հետ և որ Լևոնը, բացի լոկ խօսքից, գործ չի կատարում։ Գուցէ այդպէս ա էլ նայէր խնդրի վերայ նաև Թաֆֆին, որը իւր բոմաններում չի բաւակա-

նանում միայն քարոզել տալով իւր հերոսներին, այլ նրանց կատարել է տալիս գործեր, դուրս կորզելով խաւար ամբոխի միջից ժողովրդական մարդիկ, որոնց նա գործակից է դարձնում հերոսների ժողովրդական գործունէութեան։ Արդ, եթէ դուք ժողովրդական գործունէութեան այդ նոր ձեւի մէջ կը համաձայնէք ինձ հետ յառաջադիմութիւն տեսնել, հապա ինչու դուք այդքան զայրանում էք պ. Մաղաթեանի դէմ, որը Լեւոնի գործելու եղանակի մէջ մի պակասութիւն է տեսնում։ Ընդհակառակը, մենք պ. Մաղաթեանի այդ հայեացքի մէջ նկատել ենք ոչ միայն բարի դիտաւորութիւն, այլ և ցանկութիւն, որ ժողովրդի մէջ գործող անձինք, ամենեւին չը մոռանալով իրանց իդէալները, իւրացնեն նաև ժողովրդական գործունէութեան գործնական եղանակները և չը խորշեն ամբոխից, այլ մտնեն նորա խորքը, չը վախենալով տիրապետող խաւարից և հէնց այդ խաւարի մէջ աչք ունենան տեսնելու ժողովրդական չարթնացած բայց շատ գործերի ընդունակ ուժեր։

Ա. ԱՐԱԽԱՆԵԱՆՑ.